ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՌՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **05.12.2018թ.**
Ժամը 12:00

«ՀՌՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին.

1. ***Հայտերի գնահատման արդյունքները՝ հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.***

«ՖԼԵՇ» ՍՊ ընկերության կողմից էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգին ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին և գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. ***Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ներկայացվող պահանջները.***

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «ՖԼԵՇ» ՍՊ ընկերությունը, հանձնաժողովին է ներկայացրել հրավերով նախատեսված որակավորման չափանիշների համապատասխանությանը հիմնավորող, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. ***Ներկայացված փաստաթղթերի համապատասխանության գնահատումը, գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը.***

Հանձնաժողովը բավարար է գնահատել 2-րդ կետի համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. ***«ՀՌՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի գնահատման արդյունքների հրապարակում.***

Հանձնաժողովը որոշեց՝ ընտրված մասնակից ճանաչել «ՖԼԵՇ» ՍՊ ընկերությանը և պայմանագիր կնքելու նպատակով առաջարկել ծանուցվելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում պայմանագրի գնի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետը 10 (տասը) օրացուցային օր է:

Ընտրված մասնակցի հետ կարող է կնքվել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, 36-րդ հոդվածի և մրցույթի հրավերում նշված պահանջներին համապատասխան գնման պայմանագրի գնի 10%-ի չափով պայմանագրի կատարման ապահովումը տուժանքի կամ կանխիկ փողի ձևով ներկայացնելու դեպքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՌՀ իրավական
ապահովման բաժնի պետ — **Ա. Ներսիսյան**

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՌՀ գործերի կառավարչության
գլխավոր մասնագետ, գնումները համակարգող — **Ա. Մատինյան**

Հանձնաժողովի անդամներ՝

ՀՌՀ քարտուղարության պետ — **Վ. Դավթյան**

ՀՌՀ իրավական ապահովման
բաժնի գլխավոր մասնագետ — **Ք. Քոչարյան**

ՀՌՀ միջ. կապերի, տեղեկատվության
և զարգացման ծրագրերի
բաժնի գլխավոր մասնագետ — **Գ. Դարբինյան**

ՀՌՀ անձնակազմի կառավարման
բաժնի առաջատար մասնագետ — **Է. Գրիգորյան**